



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԲԱԳՐԱՏԱՇԵՆ, ԴԵԲԵԴԱՎԱՆ, ԴԵՂՁԱՎԱՆ ԵՎ
ՊՏՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Այս վերլուծությունն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:

ՏԱՎՈՒՇ, 2014

Վերլուծություն իրականացնող կառույց.....	3
Համայնքներ.....	4
Համայնքերի վերաբերյալ տեղեկություններ	4
Համայնքների մրցակցային առավելությունները	5
Տնտեսության ճյուղերի վերլուծություն	6
Այգեգործություն	7
Այգեգործության զարգացման միտումները համայնքներում և համեմատական առավելությունները	8
Մրգերի վերամշակում.....	13
Այգեգործության համեմատական առավելությունները.....	13
«Այգեգործություն – պտղի շարունակական վերամշակում» արժեշղթան համայնքներում	14
Այգեգործության արժեշղթայի առանձին փուլերի նկարագիր և միջամտություններ.....	15
Արևածաղկի արտադրություն.....	17
Արևածաղկի արժեշղթայի առանձին փուլերի նկարագիր և միջամտություններ.....	20
Ռեստորանային , հյուրանոցային և այլ սպասարկող ծառայություններ Երևան – Թբիլիսի մայրուղուց օգտվողների համար.....	22
Անասնապահություն	23
Առևտուր և բեռնափոխադրումներ.....	25
Զերմոցներ	27
Կանանց ներգրավվածությունը արժեշղթաներում	28
Ամփոփում	29

Վերլուծություն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՊԱՐԹՈՒԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Բազրատաշեն, Դեղձավան, Դերեղավան և Պտղավան համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի հունվար ամսին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառում է հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեքի շղթաների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում համայնքների ակտիվ դերակատարներին:



Համայնքներ

Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանին՝ Դեբեդ գետի հովտում են տեղակայված Բագրատաշեն, Դեղձավան, Դեբեդավան և Պտղավան համայնքները: Այս համայնքները համեմատաբար նոր համայնքներ են, որտեղ բնակչության զգալի մասը ՀՀ այլ շրջաններից և Ադրբեջանից եկած հայեր են:

Բնակչության հիմնական զբաղմունքը այգեգործությունն ու դաշտավարությունն է: Վրացական սահմանին և Բագրատաշենի անցակետին մոտ լինելը, ինչպես նաև 90-ականների սկզբից մինչև 2005 թ. այս հատվածում գործող «Սադախլու»-ի սահմանամերձ շուկայի առկայությունը, առևտրում հմտանալու նոր հնարավորություն ստեղծեց տեղի բնակիչների համար: Այդ հմտությունները, կապերը, գործարարության արդարացված ռիսկը մինչև այժմ այստեղ ապրող մարդկանց բնորոշ գծերն են, որոնք արդյունավետությամբ օգտագործվում են գործարարության մեջ:

Մարդիկ բաց են նորարարության, նոր բիզնես գաղափարների, հաջողված փորձի արագ կրկնօրինակման և բազմացման համար: Պահանջկոտ չեն դեպի պետական սուբսիդիաներն ու հովանավորչությունը. երազում են գործարարությանը նպաստող միջավայրի մասին, որը իրենց թույլ կտա սեփական քրտինքով և ջանքով հասնել ցանկալի արդյունքի:

Համայնքերի վերաբերյալ տեղեկություններ

	Բագրատաշեն	Դեբեդավան	Դեղձավան	Պտղավան
Բնակչություն	2900	670	346	1193
Տնային տնտեսություններ	820	180	90	302
Վարելահող	1080	400	163	270
որից՝ ջրովի	615	190	60	270
Ցանվող կուլտուրաներ (հա)	615	240	28	270
Այգիներ	126	110	58	340
Խոշոր եղջերավոր անասուններ	390	213	182	110
որից՝ կով	210	112	89	67
Մանր եղջերավորներ	450	350	60	30
Թռչուններ	3800	-	790	1190
Կոմբայններ	4	1	0	0
Տրակտորներ	17	8	7	5
Բեռնատարներ	7	1	3	1

3. Համայնքների մրցակցային առավելությունները

Մտորն ներկայացված են համայնքների տնտեսությունների մրցակցային առավելությունները, որոնց հիմքում է ընկած համայնքների տնտեսության ուժը՝ համեմատած ինչպես հարևան, այնպես էլ ՀՀ այլ մարզերի համայնքների հետ:

- Օվկիանոսի մակարդակից ՀՀ ամենացածր կետ (340 մ),
- բարենպաստ և մերձարևադարձային կլիմա, մեղմ ձմեռ,
- հողագործության երկար ժամանակահատված (սեզոն),
- բերքի հասունացման ամենակարճ ժամանակահատված,
- Բազրատաշենի մաքսակետի հարևանություն,
- Երևան – Թբիլիսի մայրուղու հարևանություն,
- գործարար կապեր ՀՀ տարբեր շրջաններում, ինչպես նաև Վրաստանում և Թուրքիայում,
- համայնքները գտնվում են Դեբեդ գետի ափին, որը ոռոգման ջրի անսպառ աղբյուր է,
- բույսերի տեսակներ, որոնք աճում են միայն այս համայնքներում՝ ձիթապտուղ, կիվի, արքայանարինջ, պիստակենի և այլն,
- հաջողված փորձի արագ կրկնօրինակման հակվածություն,
- այգեգործության մասնագետներ՝ ավանդաբար փոխանցված գիտելիքներ:

Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտեղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտեղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա.

Ռազմավարական ճյուղեր

⇒ Այգեգործություն

Շնորհիվ ցածրադիր գոտու և ոռոգման ջրի հասանելիության՝ այգեգործության համար այստեղ ստեղծված են բարենպաստ պայմաններ, ինչի արդյունքում այգեգործությունը մեծ թափով զարգանում է:

⇒ Արևածաղկի արտադրություն

Վերջին տասը տարիների ընթացքում արևածաղկի մշակումը համայնքներում մեծ թափ է ստացել: Շահութաբերությամբ և մշակման պարզությամբ այն ավելի արդյունավետ է, քան հացահատիկի մշակումը, ինչի շնորհիվ արագորեն տարածվել է համայնքներում:

⇒ Անասնապահություն

Չնայած անասնապահության համար ոչ բարենպաստ պայմաններին՝ փոքր քանակությամբ անասնաբուծությամբ զբաղվելը թույլ է տալիս բնակչությանը բավարարել սեփական կարիքները:

⇒ Գյուղմթերքի հետագա վերամշակում

Արևածաղկի հետագա վերամշակումը և փաթեթավորումը, սառնարանները, չորանոցները, մրգերից հյութերի և կիսաֆաբրիկատների ստացումը, որոնց ուղղությամբ զարգանում է տեղական տնտեսությունը, խթանում են այգեգործության և հողագործության աճը՝ ավելացնելով նաև համայնքի ներսում ստեղծվող եկամուտը:

⇒ Առևտուր

Վրաստանի սահմանակից լինելը խթանել է առևտրի զարգացումը այս համայնքներում: Բնակչության զգալի մասը ներմուծում և վաճառում է ինչպես մրգեր և բանջարաբուստանային կուլտուրաներ, այնպես էլ հագուստ ու կենցաղային նշանակության այլ ապրանքներ:

Այգեգործություն

Այգեգործությունը 4 համայնքների տնտեսության համար էլ ունի արմատական նշանակություն: Դեռևս Սովետական միության տարիներից այստեղ աճեցվել են հիմնականում դեղձ, խնձոր, սալոր և այլն: 90-ականներին այգեգործությունը անկում ապրեց աճեցվող մրգերի իրացման հետ կապված դժվարության, ինչպես նաև սահմանամերձ «Մադախլու» շուկայի պատճառով, որտեղ առևտուրը մոտակա համայնքների բնակիչներին ապահովել էր ավելի հեշտ և անհամեմատելի բարձր եկամտաբերություն ունեցող աշխատանքով:

Այժմ սկսվել է այգեգործության վերականգնման գործընթաց: Այս գործընթացը պայմանավորված է երեք էական գործոններով.

- այգեգործության համեմատաբար բարձր եկամտաբերություն՝ համեմատած դաշտավարության հետ,
- միրգ վերամշակող ձեռնարկությունների զարգացում և քանակական աճ,
- մոտ ապագայում հայկական մրգի արտահանման տեսանելի հնարավորություններ,
- մրգերի վաղ հասունացման հնարավորություն՝ շնորհիվ ցածրադիր գոտու:

Մինևույն ժամանակ պետք է նշել այգեգործության զարգացմանը խանգարող երկու գործոն.

1. Ոռոգման ջրի անհասանելիություն և բնական աղետների հետ կապված ռիսկեր

Այգեգործությունը հնարավոր չէ պատկերացնել առանց ոռոգման ջրի, իսկ ոռոգման ջրով ապահովված են ոչ բոլոր հողատարածքները: Նաև ոչ բարվոք վիճակում են համայնքների ոռոգման ներքին ցանցերը, ինչի արդյունքում ջրի մեծ կորուստ է տեղի ունենում:


Անցած տարվա ընթացքում կարկուտը բավական մեծ կորուստ պատճառեց այգիներին, ինչ պատճառով մեծ քանակությամբ բերք փչացավ, իսկ վաճառված միրգը բավական էժան էր, քանի որ բերքի վրա առկա էին կարկտահարության հետքեր:¹

2. Այգեգործության ոլորտում ներդրումների դանդաղ վերադարձը

Բավական երկար ժամանակ է անհրաժեշտ մինչև նորատունկ այգիները կհասնեն բերքատվության մակարդակի. բնակչության մեծ մասը խուսափում է այգեգործության մեջ ներդրումներ անելուց, ունենալով այլընտրանք՝ ներդրումներ կատարելու արևածաղկի և հացահատիկի աճեցման ոլորտում, որտեղ հնարավոր է արդյունք ստանալ մի քանի ամիսների ընթացքում:

Այգեգործության զարգացման միտումները համայնքներում և համեմատական առավելությունները

Ավանդական աճեցվող դեղձը աստիճանաբար զիջում է իր դիրքը մրգերի այլ տեսակների: Վերջին 5 տարիների ընթացքում ստեղծված այգիների միայն 5 % է կազմում դեղձը: Ստորև ներկայացված է նորաստեղծ այգիների բաշխվածությունը՝ ըստ մրգերի տեսակների.



¹ «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ և ՄԱԿ Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում 1,2 կմ երկարությամբ խողովակաշար է անցկացվել Բագրատաշեն համայնքում, որը ապահովել է ոռոգովի ջրով մոտ 200 հա-ի: Տեղադրվել են 3 հակակարկտակայաններ, որոնք հաջողությամբ պաշտպանել են 300 հա տարածք կարկուտից:

Համայնքներում 11 այգեգործ ունի 5 հա -ից ավելի այգի, հիմնական մասը՝ 198 այգեգործ, ունի 1-5 հա այգի, և 138 –ը՝ մինչև 1 հա այգի:

Այգեգործներ	Քանակ / հոգի
Խոշոր (5 հա և ավել)	11
Միջին (1 - 5 հա)	198
Փոքր (մինչև 1 հա)	138

Արքայանարինջ

Ինչպես երևում է վերը նշված սխեմայում, նորաստեղծ այգիների 60% -ը արքայանարինջն է: Դա պայմանավորված է արքայանարնջի աճեցման հեշտությամբ, սառնարաններում պահպանման դյուրին լինելով և ձմռան ամիսներին՝ մեծ պահանջարկով: Միևնույն ժամանակ արքայանարինջ չեն արտադրում ՀՀ այգեգործության առաջատար այլ համայնքները՝ Վայոց ձորը և Արարատյան դաշտավայրը:

Նաև մեծ է արքայանարնջի պահանջարկը վերամշակող ձեռնարկությունների կողմից՝ չորանոցներ և սառնարաններ:

Արքայանարինջը, լինելով պահանջված, միևնույն ժամանակ ունի մշակման հետ կապված բարդություն՝ ցրտադիմացկունություն: - 15 °C -ը վտանգավոր է արքայանարնջի համար, ընդ որում՝ ոչ թե բերքի, այլ հենց ծառի համար: Ի տարբերություն այլ մրգերի տեսակների, որոնց դեպքում ցրտահարությունը կարող է փչացնել այդ տարվա բերքը, արքայանարինջի դեպքում եղել են դեպքեր, երբ ցրտահարության ընթացքում ավելի քան երկու հեկտար մինչև 10 -ը տարեկան ծառեր են ցրտահարվել ամբողջությամբ:

Խնձոր

Խնձորը ավանդապես մշակվել է և շարունակվում է մշակվել այս համայնքներում: Աճին նպաստում է նաև արքայանարնջի ցրտահարության հետ կապված խնդիրը: Մշակման պայմաններով և բերքահավաքի ժամանակահատվածով շատ մոտ լինելով արքայանարնջին՝ արքայանարնջի ցրտահարված ծառի փոխարեն հաճախ տնկում են հենց խնձորի ծառ:

Խնձորը ևս հեշտ է պահպանել և վաճառել ձմռան ամիսներին:

Նեկտարենի և դեղձ

Դեղձի բերքահավաքի ժամանակահատվածի կարճությունը հանգեցնում է դրա գների շարունակական կրճատմանը, ինչն ուղղակիորեն ազդում է այգեգործի՝ որակյալ և բարձր բերքատվությամբ արդյունք ունենալու մոտիվացիայի վրա:

Դեղձն ունի պահպանման շատ կարճ ժամկետ՝ մինչև երեք օր, ինչի արդյունքում հնարավոր չէ ներկա պայմաններում հավաքել ամբողջ բերքը և իրացնել: Բերքը հիմնականում հանձնվում է ՀՀ մրգեր ընդունող և վերամշակող ձեռնարկություններին, որոնց ընդունման գինը փոփոխական է և սովորաբար շատ մոտ է արտադրված մրգի ինքնարժեքին: Օրինակի համար նշենք, որ անցած տարի բերքը ընդունվել է կիլոգրամը 30 - 50 դրամով, ինչի արդյունքում այգեգործները մասսայական հրաժարվել են բերքը հանձնելուց:

Դեղձը սկսել են փոխարինել նեկտարենիով, քանի որ նեկտարենին ավելի շուտ է հասունանում, ինչի արդյունքում շուկայում ունի բարձր գին և պահանջարկ:

Սալոր

Սալորի աճեցումը ևս սկսել է բավական տարածված դառնալ: Թարմ սալորը և սալորաչիրը պահանջված են հայկական շուկայում, ինչի արդյունքում այգեգործները շահագրգռված են այս մրգի աճեցմամբ:



Խաղողագործություն

Հիմնական աճեցվող սորտը Ռկացետելին է: Քիչ քանակությամբ աճեցվում են նաև Լարվար, Բանանց և այլ խաղողի տեսակներ: Այստեղի խաղողը աչքի է ընկնում շաքարի բարձր քանակով, ինչը սակայն մթերողները ընդունելիս հաշվի չեն առնում, քանի որ հումքը հիմնականում օգտագործվում է շամպայնի արտադրության մեջ:

Այգիներից 10 հա-ն ամենահին այգիներն են, որոնք հիմնադրվել են 1960-ականներին: Ամենաերիտասարդ այգիները հիմնադրվել են 1986 թ-ին: Տարբեր տարիներին հիմնադրված այգիներն ունեն վազերի տարբեր դասավորվածություն. կան այգիներ, որոնց վազերի շարքերի հեռավորությունը կազմում է 2 մետր, իսկ մնացածինը՝ 3-4 մետր, ինչը դժվարություն է առաջացնում այգիների՝ նույն գյուղ. տեխնիկայով մշակման ժամանակ:

Այս այգիներում ջրի հիմնական աղբյուրը եղել է Բագրատաշեն գյուղի միջով անցնող ոռոգման ջրաղիծը, որն այժմ բավականին կեղտոտված և խցանված է: Բագրատաշեն համայնքում ջրագծի վրա և երկայնքով կառուցվել են շինություններ, որոնք խոչընդոտում են տեխնիկայով հնարավոր մաքրմանը: Ոռոգման այլընտրանքային աղբյուր է Դեբեդ գետը:

Խաղողի բերքատվության ամենաբարձր ցուցանիշը 12 տոննա/ հա է, միջինացված ցուցանիշը՝ 10 տոննա/հա: Բերքը 135 դրամով հանձնում են համայնքում գործող «Նոյեմբերյանի գինու գործարանին»: Գործարանը հիմնականում պարտաճանաչ վճարում է բերքի դիմաց (հնարավոր են մինչև երկու ամիս ուշացումներ), ցանկացողներին տրամադրում է կանխավճար՝ զարնանը՝ 200 000 դրամի չափով:

Նաև բերքը հնարավոր է վաճառել Բերդավանի գինու գործարանին, սակայն նրանք սկսում են մթերել ավելի ուշ, ինչի պատճառով խաղողագործները չեն ունենում որակյալ արտադրանք: Գյուղում խաղողագործների մի մասը արտադրում է գինի տնական պայմաններում, հիմնականում՝ սեփական սպառման համար: Նաև վաճառում են փոքր քանակությամբ՝ 1 լիտրը 700 դրամով:


Այլ մրգեր և պտուղներ

Բացի վերը նշված մրգերից, աճեցվում են թուզ, նուշ, կիվի, ձիթապտուղ և այլն: Ի տարբերություն մնացածի, որոնք հիմնականում վերջին տարիների ընթացքում են սկսել մշակել, ձիթապտուղը աճեցվում է ավելի քան 50 տարի: Ներկայումս Բագրատաշեն համայնքում մշակվում է շուրջ 40 հա ձիթապտուղ և հավաքվում է 20-25տ բերք: Այն տնական պայմաններում վերամշակվում է և վաճառվում 1կգ-ը 1500 -2000 դրամով: Իսկ առանց վերամշակման՝ միջինը 700 դրամով:

Այգեգործության աճն ուղղակիորեն կապված է այս ոլորտում որակյալ մատակարարումների, մասնագիտական հմտությունների և շուկայում հաստատուն կապերի հետ: Ցավոք, այս պահին համայնքներում մատակարարվում են հիմնականում անորակ նյութեր (դեղանյութ, քիմիկատ, տնկի և այլն), ինչն իր անմիջական ազդեցությունն է ունենում թե՛ բերքատվության, թե՛ մրգերի որակի վրա:

Ի տարբերություն մարզի այլ համայնքների, այստեղ առկա են շուկայական հաստատուն կապեր, և խնդիրը միայն որակյալ մատակարարման և արժեշղթայի ամբողջական կայացման մեջ է: Համայնքներում բավական ցածր է նաև պտղի աճեցման գործընթացին վերաբերող մասնագիտական գիտելիքը:

Ընդհանուր առմամբ, այգեգործության ոլորտում տեղի ունեցող զարգացման փակ շրջապտույտը հնարավոր է արտահայտել հետևյալ գրաֆիկի միջոցով:



Եթե վերը նշված պայմաններին գումարենք նաև եղանակային անկանխատեսելի պայմաններն ու այգեգործների ոչ պատրաստվածությունը այդ պայմաններին, ապա կստացվի այգեգործության զարգացման խոչընդոտների շղթան:

Մրգերի վերամշակում

Համայնքներում վերջին տարիներին զարգանում է նաև մրգի վերամշակման ոլորտը: Այստեղ ստեղծվել են 3 արևային և 8 էլեկտրաէներգիայով աշխատող չորանոց, 2 ժամանակակից սառնարան և չրի հավաքման կետ:

Այս ձեռնարկությունները փոքր, բայց հաստատուն պահանջարկ և իրացում են ապահովում համայնքներում արտադրվող բերքի համար:

Այս ոլորտի ձեռնարկությունների զարգացումը, ինչպես նաև նոր ձեռնարկությունների ստեղծումը, որոնք կկարողանան արտադրել որակյալ և ստանդարտացված արտադրանք, թույլ կտա էականորեն խթանել այգեգործության հետագա զարգացումը և համայնքներում ստեղծվող եկամտի աճը:




Այգեգործության համեմատական առավելությունները²

1	Պտղի անվանումը	Դեղձ	Խնձոր	Արքայա- նարինջ	Չիթա- պտուղ
2	1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	25 000	30 000	30 000	1 500
3	1 կգ-ի միջին մեծածախ գինը (2013թ)	80	150	200	700
4	1 հա-ից ստացված եկամուտը ('2'x'3')	2 000 000	4 500 000	6 000 000	1 50 000
5	Կատարված ուղղակի ծախսերը	450 000	300 000	300 000	200 000
6	Եկամուտ հանած ուղղակի ծախսեր	1 550 000	4 200 000	5 700 000	950 000
7	1 հա-ի վրա աշխատած մարդ/օրերի քանակը	100	100	100	100
8	Արտադրողականություն դրամով	15500	42000	57000	9500

² Այգեգործության մեջ արտադրողականության հաշվարկի համար որպես պայմանական միավոր ընդունված է մեկ հեկտար այգում պտուղների աճեցումը, դրանից ստացվող եկամուտը, ինչպես նաև դրա աճեցման վրա ծախսվող աշխատանքի քանակը:

«Այգեգործություն - պտղի շարունակական վերամշակում» արժեզրթան համայնքներում



Այգեգործության արժեզրթայի առանձին փուլերի նկարագիր և միջամտություններ

1



Պտղի աճեցում, տեսակավորում, այգիների ընդլայնում

Այս օղակում անմիջապես այգեգործն է: Օղակը ընդգրկում է պտղի աճեցման, բերքի հավաքման և տեսակավորման գործընթացը: Ստորև ներկայացված են օղակում եղած թույլ կետերը և հնարավոր միջամտության տարբերակները:

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Որակյալ նյութերի, տնկիների, քիմիկատների, պարարտանյութերի ձեռքբերման դժվարություն	Ենթաշրջանի համար այգեգործական ռեսուրս կենտրոնի հիմնում	այգեգործական ռեսուրս կենտրոնի ստեղծում, որը <ul style="list-style-type: none"> կտրամադրի մասնագիտական խորհրդատվություն Կվաճառի երաշխավորված բուժանյութեր, պարարտանյութեր, սերմեր և գործիքներ Նոր և արդյունավետ տնկիների մատակարարում
Աճեցման գործընթացի խթանման ժամանակակից միջոցների վերաբերյալ տեղեկության և գիտելիքի պակաս:		
Որակյալ գյուղ. ծառայությունների բացակայություն		
Ոռոգելի հողատարածքների սղություն	Ոռոգելի հողատարածքների ավելացում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, ՄԱԿ «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագիրը 1200 մետր ոռոգման ջրագիծ են կառուցել Բագրատաշենում, ինչը ևս 200 հա ոռոգովի հողատարածք ունենալու հնարավորություն է ընձեռել: Անհրաժեշտություն կա համայնքներում ևս ընդհանուր հաշվով 3 կմ ջրագծի անցկացման:
Եղանակային բարդ պայմաններին անպատրաստվածություն	Հակակարկտակայ անների տեղադրում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, ՄԱԶՍ Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում ծրագիրը տեղադրել են երեք հակակարկտակայաններ Բագրատաշենում, որոնք 300 հա հողատարածք պաշտպանում են կարկուտից: Այլ համայնքներում հակակարկտակայանների տեղադրման անհրաժեշտություն կա:



Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
<p>Վերամշակող արտադրամասերի քանակը և արտադրական հզորությունները փոքր են, ինչի արդյունքում վերամշակվում է ստացվող բերքի միայն աննշան մասը:</p>	<p>Չորանոցներ</p>	<p>Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագիրը Նոյեմբերյանի շրջանում հիմնել են 14 արևային և էներգիայով աշխատող չորանոցներ, որոնցից 7-ը՝ սվյալ համայնքներում: Անհրաժեշտություն կա չորանոցների կառուցման:</p>
	<p>Սառնարանային փոքր տնտեսություններ</p>	<p>Անհրաժեշտություն կա փոքր չափերի սառնարանների ստեղծման:</p>
	<p>Օդու և գինու արտադրության փոքր տնտեսություններ</p>	<p>Անհրաժեշտություն կա այգեգործների վերապատրաստման՝ տնական պայմաններում գինու և օդու ստացման ուղղությամբ:</p>
	<p>Տարայավորման, մշակման, մուրաբաների և ջեմերի փոքր արտադրամասեր</p>	<p>Անհրաժեշտություն կա ձիթապտղի, մրգերի և հատապտղի մշակման փոքր արտադրամասերի ստեղծման:</p>

Արևածաղկի արտադրություն

Վերջին 8 տարիների ընթացքում արևածաղկի արտադրությունը դարձել է այս համայնքների տնտեսության հենակետային ճյուղերից մեկը: Այս հանգամանքը պայմանավորված է արևածաղկի հեշտ մշակմամբ, մեծ պահանջարկով և համեմատաբար քիչ աշխատատարությամբ՝ համեմատած այլ մշակաբույսերի հետ :


Ընդհանուր առմամբ, համայնքներում աճեցվում է միջինը 700 հա արևածաղիկ: Մեկ հեկտարից ստացվում է միջինը 1,2 տոննա արևածաղիկ, որի վաճառքի միջին գինը 650 դրամ է: Մեկ հեկտարից շահույթը կազմում է 350 – 400 հզ. դրամ:

Բազրատաշենում գործում են արևածաղկի երկու բովարան, որոնք մթերում են անսահմանափակ քանակությամբ արևածաղիկ: Ստորև ներկայացված է արևածաղկի ոլորտում աշխատանքի արտադրողականությունը, ինչպես նաև աշնանացան ցորենի և գարու արտադրողականությունները, որպեսզի հնարավոր լինի համեմատել:

		Ցորեն	Գարի	Արևածաղիկ	Ցրտադիմացկուն կանաչիներ
1	1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	2820	2350	1200	2000
2	1 կգ-ի միջին մեծածախ գինը (2013թ)	150	130	550	400
3	1 հա-ից ստացված եկամուտը ('1'x'2')	423000	305500	660000	800000
4	1 հա-ի վրա կատարված ծախսերը	130000	110000	200000	150000
5	1 հա-ի վրա աշխատած մարդ/օրերի քանակը	50	50	40	80
6	1 մարդու օրական արտադրողականությունը՝ դրամով (('3'-4):'5')	5860	3910	11500	8125

Ակնհայտ է արևածաղկի աճեցման առավելությունը ցորենի և գարու հետ համեմատած: Այստեղ մեկ մարդը ստեղծում է 2-3 անգամ ավելի մեծ արժեք, համապատասխանաբար նաև շահույթ, քան ցորենի և գարու դեպքում է:

Ստորև ներկայացված է արևածաղկի աճեցման դինամիկան՝ ըստ մշակվող հողատարածքների և տարիների:



Ինչպես երևում է գրաֆիկից, վերջին տարիների ընթացքում արևածաղկի աճեցումը անկում է ապրում, որը 2014-ին հասել է ռեկորդային ցածր ցուցանիշի, ինչը պայմանավորված է բերքատվության անկմամբ: Եթե 2012-ին միջին բերքը 1200 կգ էր մեկ հեկտարից, 2013 -ին այն կազմել է 700 կգ:

Բերքատվության անկումը պայմանավորված է հետևյալ երկու գործոններով.

- **Միևնույն տեսակի սերմերի օգտագործում**

Մշտապես նույն սերմի կիրառումը բերում է բերքատվության և ստացվող բերքի որակի անկմանը ոչ միայն արևածաղկի, այլև ցանկացած այլ մշակաբույսերի մշակման դեպքում: Անհրաժեշտ է որակյալ սերմացուների ներկրում:

- **Հողերի որակի անկում**

Նույն հողակտորում միևնույն մշակաբույսի անընդհատ աճեցումը, ինչպես նաև հողի պարարտայնացմանն ուղղված գործողությունների բացակայությունը, բերում է հողի որակական անկմանը, ինչի հետևանքով նվազում է նաև բերքատվությունը:

Արևածաղկի վերջին բերքահավաքը սեպտեմբեր ամսին է: Հաշվի առնելով տաք օրերի մեծ քանակը և համեմատաբար մեղմ ձմեռը՝ արդյունավետությունը կարելի է բարձրացնել՝ մնացած ամիսներին արևածաղկի հողատարածքներում ցրտադիմացկուն կանաչեղեն աճեցնող ջերմոցներ տեղադրելով, որտեղ կարելի է բերք ստանալ մինչև հաջորդ տարվա գարուն, երբ կսկսվեն արևածաղկի աճեցման աշխատանքները:

Հնարավոր է նաև հողերի վերականգնումը այդ հողերում այլ մշակաբույսերի աճեցմամբ, որը թույլ կտա մասնակի վերականգնել հողը:



Արևածաղկի արժեչոթայի առանձին փուլերի նկարագիր և միջամտություններ

1



Աճեցում, մշակում

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
<p>Անցած 9 տարիների ընթացքում չի կատարվել սերմացուի թարմացում, ինչը բերել է բերքատվության անկման:</p>	<p>Նոր սերմացուի մատակարարում</p>	<p>Նոր և որակյալ սերմերի մատակարարների հետ կապի հաստատում, ներկրման աջակցություն</p>
<p>Մշակող գյուղտեխնիկան հին է և քիչ քանակությամբ: Հողագործները չեն կարողանում ժամանակին վարել հողը, մեծ պահանջարկը հանգեցնում է գների անխելամիտ թանկացման:</p>	<p>Երեք վարող տրակտորների ձեռք բերման աջակցություն</p>	<p>Ֆերմերներին և մեխանիզատորներին հնարավոր գյուղտեխնիկայի թարմացման ուղղությամբ տեղեկության տրամադրում</p>
<p>Չկա արևածաղկի կոմբայն: Օգտագործվում է հարմարեցված հացահատիկի կոմբայն, ինչի համար ամբողջ բերքը հավաքում են մարդիկ և կոմբայնը կատարում է միայն գոման աշխատանքը: Արևածաղկի կոմբայնը երկու անգամ կկրճատի օգտագործվող ժամանակը և բերքի հավաքման ծախսը:</p>	<p>Արևածաղկի մեկ կոմբայնի ձեռք բերման օժանդակություն</p>	<p>Շահագրգիռ ֆերմերի/ մեխանիզատորի առկայության դեպքում արևածաղկի կոմբայնի ձեռքբերման և ներմուծման աջակցություն</p>

	Նոր մշակաբույսերի պարբերաբար աճեցում	Հողերի վերլուծություն, արդյունավետ մշակաբույսերի աճեցման օժանդակում
Մշտապես արևածաղկի աճեցումը միևնույն հողակտորում բերել է հողի որակի անկմանը:	Ցրտադիմացկուն կանաչեղենի աճեցման համար նախատեսված ջերմոցների տեղադրում	Ջերմոցների տեղադրման աջակցություն



Տեսակավորում, բովում

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Բերքահավաքից հետո արևածաղիկը պետք է չորացվի, ինչն արվում է արևային եղանակով:	Չորացնող սարքավորումների ձեռքբերում	Աջակցություն սարքավորումների ձեռքբերման գործում, բիզնես պլանավորման խորհրդատվություն
Բովարանները չեն օգտագործում արդյունավետ տեխնոլոգիաներ:	Օդային բովող սարքավորումների ձեռքբերում	

Ռեատորանային , հյուրանոցային և այլ սպասարկող ծառայություններ Երևան – Թբիլիսի մայրուղուց օգտվողների համար

Այս ոլորտը ինքնուրույն զարգացում է ապրում: Սահմանից մինչև տասը կմ հեռավորության վրա կան.

- հյուրանոցային ծառայություններ մատուցող 3 կետ,
- 6 խանութ,
- ավտոմեքենաների լվացման 2 կետ,
- տեխասպասարկման 3 կետ,
- գազալցակայան, ևս մեկը կառուցվում է:

Այստեղ մեծ հնարավորություններ կան փոքր բիզնեսի համար հիմնելու

- լվացման կետեր բեռնատարների համար,
- սրճարաններ,
- տնտեսական ապրանքների առևտուր,
- դեղատուն

Ինչպես նաև բարելավելու ծառայությունների ընդհանուր որակը, որն այժմ համեմատաբար թույլ է:

Անասնապահություն

Անասնապահությունը համեմատաբար թույլ է զարգացած համայնքներում: Հիմնականում կաթի ու մսի արտադրությունը տեղական և ընտանեկան սպառման համար է կատարվում:



Համայնքում կան

Խոշոր եղջերավոր անասուններ	815
որից՝ կով	478
մանր եղջերավոր	890

Անասնապահությունը արտադրողականությամբ էապես զիջում է այգեգործությանը: Ստորև ներկայացված է անասնապահության հիմնական ճյուղերի համար արտադրողականության հաշվարկը:

1	Անվանումը	Խոզ	Կով	Բավոդ հորթեր	Ոչխար
2	Օպտիմալ տնտեսություն ³	30 հատ երկու ամսական գոճի	10 կով	10 հորթ	100 ոչխար
3	Ստացվող արդյունքը միավորից	40 կգ միս յուրաքանչյուր վեց ամսական խոզից	2 000 լիտր կաթ 1 հորթ	200 կգ միս երկու տարում	1 գառ 2,5 կգ բուրդ
4	Ընդհանուր արդյունքը	1200 կգ միս	20 000 լ կաթ 10 հորթ	2000 ն կգ միս	100 գառ 250 կգ բուրդ
5	Մեկ միավորի մեծածախ գինը	2500 դրամ մեկ կիլոգրամ խոզի միսը	130 դրամ մեկ լիտր կաթը 60 000 դրամ մեկ հորթը	2000 դրամ մեկ կիլոգրամ միսը	1 գառը 40000 1 կգ բուրդը 700 դրամ
6	ստացվող եկամուտը ('4'x'5')	3 000 000	3 200 000	4 000 000	4175000
7	անհրաժեշտ նյութական ծախսերը	1250000	1 900 000	2200000	1200000
8	Անհրաժեշտ մարդ/օրերի քանակը	120	100	100	230
9	1 մարդու օրական արտադրողականությունը՝ դրամով (('6':-'7')'8')	14583	13000	16000	12935

Ակնհայտ է, որ անասնապահության մեջ աշխատանքի արտադրողականությունը բավականին ցածր է այգեգործության ոլորտում աշխատանքի արտադրողականությունից և պահանջում է շատ ավելի մեծ ներդրում, քան այգեգործության մեջ: Համեմատության համար ասենք, որ 10 բովոլ հորթ ունեցող տնտեսության դեպքում մեկ մարդու աշխատանքի արտադրողականությունը շատ ավելի փոքր է, քան մեկ հեկտար խնձորի աճեցման դեպքում ստացվող արտադրողականությունը:



Առևտուր և բեռնափոխադրումներ

«Սադախլու» շուկան իր արմատական դերն է ունեցել առևտրի ունակությունների և փորձի կուտակման վրա: Շուկան իր գործունեության մոտ տասը տարիների ընթացքում հնարավորություն ընձեռեց շուկային կից համայնքների բնակիչներին ձեռք բերել առևտրային մեծ ունակություններ, կապեր ինչպես ՀՀ տարբեր շրջանների գործարարների, մեծածախ և մանրածախ առևտրով զբաղվողների, այնպես էլ Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ձեռներեցների հետ:

Շուկայի փակվելուց հետո բնակիչների մի մասը գնեց փոքր բեռնատար մեքենաներ և շարունակեց զբաղվել առևտրով՝ ներմուծելով ապրանքներ հիմնականում Ռուսաստանի հարավային շրջաններից, Վրաստանից և Թուրքիայից: Այժմ կան մոտ 25 առևտրով զբաղվողներ, ովքեր իրենց սեփական փոքր բեռնատարներով («Ford» կամ «ГАЗЕЛЬ» մակնիշի) ներմուծում են տարբեր տեսակի արտադրանք (միրգ, հագուստ, արևածաղիկ, չրեր և այլն) ու վաճառում ՀՀ տարբեր շրջաններում:

Նոյեմբեր դեկտեմբեր ամիսներին առևտուրը և ապրանքների ներմուծումը կտրուկ ակտիվանում է և առևտրով սկսում են զբաղվել մոտ 300 մարդ:

Իրականացվող առևտուրը և բեռնափոխադրումը կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

1. Ներմուծում և տեղական արտադրանքի վաճառք ՀՀ տարբեր շրջաններում

Հիմնականում սեփական փոքր բեռնատար մեքենաներով ներմուծում են միրգ, հագուստ, չրեր և այլն ու վաճառում ՀՀ ամբողջ տարածքում: Միևնույն ժամանակ նրանք համատեղ վաճառում են նաև տեղական արտադրանքը՝ վերամշակված արևածաղիկը և մրգերի որոշ տեսակներ (դեղձ, արքայախնձոր և այլն):

2. Տեղական արտադրանքի արտահանում Վրաստան և Ռուսաստանի հարավային շրջաններ

Այս առևտուրը համեմատաբար նոր է ձևավորվում համայնքում և առկա է փորձի, ինչպես նաև արտահանման և համապատասխանաբար այլ երկրներում ներմուծման ընթացակարգի հետ

կապված գիտելիքի պակաս, նաև որոշակի անորոշություն, ինչը խոչընդոտում է այս ճյուղի զարգացմանը:

Արդեն կատարվում են քայլեր և փորձեր տեղական արտադրանքի արտահանման հետ կապված, ինչը մինչ այժմ կատարվում էր հիմնականում հայաստանյան մի քանի խոշոր բեռնափոխադրողների կողմից, որոնք արտահանում էին տարածքից հիմնականում հոն և ոչ մեծ քանակով՝ դեղձ:

Մեծ թափով վերանորոգվում և ընդարձակվում է Բագրատաշենի մաքսակետը, որը ևս կհեշտացնի և կարագացնի մաքսակետում ապրանքների արտահանման և ներմուծման հետ կապված գործընթացը:



Արտահանման զարգացման համար արմատական նշանակություն ունի նաև սառեցնող մեքենաների ձեռքբերումը, որը թույլ կտա տեղափոխել բերքը՝ առանց որակական հատկանիշների կորստի:

Առևտրի ոլորտի զարգացման համար արմատական կարող է լինել՝

- մաքսային ընթացակարգերի, արտահանման և ներմուծման հետ կապված դասընթացների անցկացումը և իրազեկումը,
- սառնարանային մեքենաների ձեռքբերման աջակցությունը:

Ջերմոցներ

Վերջին տարիների ընթացքում համայնքներում մեծ թափ ստացավ ջերմոցների տեղադրումը: Այս հարցում արմատական դեր ունեցավ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, ՄԱԿ-ի «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» և Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի կողմից հովանավորվող ջերմատների կառուցման ծրագիրը, որի ընթացքում կառուցվեցին 120 քմ ընդհանուր մակերես ունեցող 17 ջերմատուն:

Փորձի պակասը որոշակի խնդիրներ է առաջացնում ջերմոցներում բերքի ստացման հետ կապված, ինչը հաղթահարվում է այս ոլորտում ներգրավված մարդկանց աշխատասիրության շնորհիվ:

Այժմ ջերմատներում աճեցվում են բանջարեղեն և կանաչի: Մեծ կարևորություն ունի ջերմոցների տաքացման հնարավորությունների ստեղծումը, ինչ կնպաստի բերքի ստացմանը ձմեռվա ամիսներին, երբ գները 2-5 անգամ ավելի բարձր են:



Կանանց ներգրավվածությունը արժեշտաբաններում

Աճեցման փուլում կանայք գրեթե ներգրավված չեն գործընթացին: Այստեղ հիմնական ծանրությունը տղամարդկանց «ուսերին» է: Կանայք ներգրավված են միայն տնամերձ այգիներում աշխատանքների կատարմանը, հիմնականում՝ ոռոգման գործընթացում:

Ի տարբերություն աճեցման գործընթացի՝ բերքահավաքի և հետագա վերամշակման մեջ կանայք ներգրավված են ակտիվորեն:

Այգեգործության մեջ բերքահավաքին մասնակցում են մոտ 250 կին, որոնցից 70 %-ը մասնակցում է սեփական այգիներից բերքի հավաքման գործընթացին, իսկ մնացածը՝ որպես վարձու աշխատուժ այլ այգիներից բերքի հավաքման համար:

Դաշտավարության մեջ կանայք հիմնականում ներգրավված են որպես արևածաղկի բերքի հավաքման վարձու աշխատողներ: Այստեղ աշխատում են մոտ 120 կին:

Մրգի վերամշակման գործընթացում մոտ 350 կին տնային պայմաններում ներգրավված են մրգերի չորացման, հյութերի արտադրության գործընթացում, ևս 20-ը աշխատում են Բագրատաշենի հավաքման կետում, Նոյեմբերյանի գինու գործարանում և այլ վերամշակող փոքր արտադրամասերում:

Մեկ կին ներգրավված է կառավարման մեջ. հանդիսանում է Նոյեմբերյանի գինու գործարանի գործադիր տնօրենը:

Եվս 84 կին ներգրավված են անասնապահության մեջ՝ հիմնականում կթի, տնական պայմաններում կաթնամթերքի ստացման և կենդանիների խնամքի գործընթացներում:

Հյուրանոցային և հասարակական սննդի ոլորտում ներգրավված են 12 կին՝ որպես խոհարար, մատուցողուհի և հավաքարար:

Առևտրի ոլորտում ներգրավված են 38 կին, որոնցից 21-ն ունեն սեփական (ընտանեկան) բիզնես, իսկ մնացած 7-ը աշխատում են որպես վաճառողուհիներ այլ բիզնեսներում:

Ամփոփում

Այս համայնքները իրենց մրցակցային առավելություններով բավական ինքնատիպ են: Տնտեսությունը հիմնականում զարգանում է՝ հիմնվելով տեղական տնտեսական առավելությունների վրա. մարդիկ ունեն բարձր գործարար հատկանիշներ և ցուցաբերում են մեծ նախաձեռնողականություն և աշխատասիրություն:

Տնտեսության մեջ գյուղատնտեսության առաջատար ճյուղերում աշխատանքի արտադրողականության վերլուծությունը ցույց տվեց, որ ամենաբարձր արժեքը ստեղծվում է այգեգործության ոլորտում, որը գնալով աճ ու զարգացում է ապահովում:

Այգեգործության ոլորտում ավանդական աճեցվող դեղձին փոխարինում է հիմնականում արքայանարինջը, որը առավել եկամտաբեր է, համեմատաբար հեշտ է մշակվում, պահպանվում և ունի ձմռան ամիսներին մեծ պահանջարկ:

Այգեգործության ճյուղում ՏՏԶ փորձագետները և տեղական թիմը առաջ քաշեցին հետևյալ նախաձեռնությունը / առաջարկությունները:

Այգեգործության / պտղի շարունակական վերամշակման արժեշտի կայացում

- շրջանում այգեգործական ռեսուրս կենտրոնի հիմնում,
- ոռոգելի հողատարածքների ավելացում: Առաջնահերթ՝
 - 800 մ. ջրագծի կառուցում Բագրատաշեն համայնքում,
 - 800 մ. ոռոգման ջրի ներքին ցանցի բարեկարգում Դեղձավան համայնքում,
 - Դեբեդավան համայնքում հորքային տեխնիկական ջրի մղող պոմպի տեղադրում,
- հակակարկտակայանների կառուցում: Առաջնահերթ՝
 - Պտղավան համայնքում երկու հակակարկտակայանների տեղադրում,
- որակի միևնույն ստանդարտներով աշխատող պտղի վերամշակող փոքր արտադրամասերի հիմնում (չրանոցներ, սառնարաններ, տարայավորողներ, օդու, մուրաբաների և ջեմերի արտադրողներ):

Մանրամասն առաջարկությունները ներկայացված են «Այգեգործություն» բաժնում:

Ի տարբերություն այգեգործության՝ դաշտավարության մեջ ստեղծվում է ամենափոքր արժեքը: Այստեղ համեմատաբար արդյունավետ է արևածաղկի արտադրությունը, որը միջին հաշվով մեկ հեկտարից ապահովում է 350 – 400 հզ. դրամ շահույթ:

Արևածաղկի արտադրության մեջ վեր հանվեցին հետևյալ առաջարկությունները, որոնք մանրամասն ներկայացված են «Արևածաղկի արտադրություն» բաժնում:

Արևածաղկի արտադրության արժեզրթա

- սերմացուի թարմացում,
- մշակող տեխնիկայի թարմացում,
- արևածաղկի կոմբայնի ձեռքբերում,
- անցում արևային չորացումից էլեկտրականի,
- ցանվող հողակտորներում պարբերաբար այլ մշակաբույսերի աճեցում՝ հողի որակական հատկանիշների վերականգնման նպատակով,
- արևածաղկի հողատարածքներում աշուն – գարուն ժամանակահատվածում ցրտադիմացկուն կանաչեղենի արտադրության համար ջերմոցների հիմնում,
- վերամշակող ձեռնարկությունների տեխնիկական թարմացում:

Բավական մեծ է նաև ստեղծվող արժեքը անասնապահության մեջ, որտեղ, ցավոք, համայնքները չունեն աճի մեծ պոտենցիալ և մրցունակ չեն: Սահամանափակ են հողատարածքները, խոտհարքներն ու արոտավայրերը: Այս ճյուղը հետագայում ևս միտված կլինի ներքին և ընտանեկան պահանջարկի բավարարմանը:

Համայնքերի տնտեսությունների համար արմատական նշանակություն ունեն մեծածախ առևտուրն ու բեռնափոխադրումները, որոնց զարգացումը ուղղակիորեն կապված է մաքսային ոլորտի իմացության և, հնարավոր է, որոշ դեպքերում նաև պետական աջակցության հետ: Այս ոլորտի զարգացմանն ուղղված են երկու նախաձեռնություններ՝

- մաքսային ընթացակարգերի, արտահանման և ներմուծման հետ կապված դասընթացների անցկացում և իրագեկում,
- սառնարանային մեքենաների ձեռքբերման աջակցություն:

Տեսանելի հնարավորություններ կան նաև փոքր բիզնեսների համար, որոնք ներկայացված են ստորև.

- Հյուրանոցային և հանրային սննդի ծառայություններ,
- Երևան – Թբիլիսի ավտոճանապարհի վրա՝ սննդի և տեխնիկական խանութներ,
- բեռնատար և մարդատար մեքենաների լվացման կետեր և տեխսպասարկում,
- գազի և բենզինի լցակայաններ,
- դեղատուն,
- տուրիստական փոքր գործակալություններ,
- տաքսիներ,
- բեռնափոխադրումներ,
- արկղերի արտադրություն:

Շնորհակալություն ենք հայտնում Բագրատաշեն, Դեբեդավան, Դեղձավան և Պտղավան համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

